

# Հ Ի Ն Հ Ա Ի Ա Տ Ք

ԳՂ. Թ. - ՊԱՇՏՈՆ ԶԱՍՏԻԱՍՏՈՅ

(Տես յ'էջ 97)



Ա. Ա. Գ. Գ. — Ինչուան հիմայ մեր յիշած Հայոց պաշտելի շատուածոց մէջ՝ միայն Աստղիկն էր զուտ հայկական անուամբ կոչուած, և հայ գիցարանութեան ծնունդ. այսպէս համարելի է և վահագն, թէ և ինքն այլ ունենայ Աստղիկան և ուրիշներու պէս՝ իրեն օտար զուգակից կամ փոխանակ, ինչպէս Հերակլէս մի. և թէպէտ պատմութիւնն իբրեւ իրական անձ մի երեւցընէ մեզ զնա և զիցազանց մէջ դասելի, սակայն պաշտօնն և մահնանքն հաւասարած են շատուածոց, և Հայոց եօթն զիսաւոր զից և մահնաց մին գտած:

Վահագն լատ պատմութեան, որդի կամ մահաւանդ թոռն է Երուանդեան Տիգրանայ Հայկազնոյ, անոր հետ պատերազմած և յաղթած Մարաց հուլակաւոր Աժգահակ թագաւորին. որոյ անունը հայերէն թարգմանելով զի պատանք Հայոց, զնա՝ զիշապ, իրենները՝ Վիշապազունք կոչէին, ըստ խորենացոյ, և « ընդ » Վիշապաց ասէին յԵրզնէ կուռել նմա և » յաղթել. և կարի իմն նմանազոյնս զՀերակլ » լեայ նահատակութեանցն՝ նմա երգէին » Մարաց և Պարսից մեծ հակառակութիւնն և կռիւն՝ յայս է և յօտար պատմչաց, թէ և ոմանք բարեկամ և ոչ թշնամի համարին զասոնք. բայց պատմահայրն Յունաց (Երոզոտ) և մեր պատմահայրս (Մ. Խորեն.) զՀայս և զՊարսս պաշնակիցս և թշնամիս Մարաց ցուցընեն. և ինչպէս Պարսք իրենց կիրթուր Աժգահակայ հակառակորդ և սիւթող հռչակեն, այսպէս և Հայք իրենց սիրելի Տիգրանը. որոյ զրայ երգուած յիշատակաց մաս մի աւանդէ խորենացի (Ա. Ին-Ն.) ըստ հին վի-

պատմութեան Հայոց, որոյ մէջ խառնուած կամ յաւելուած էին և վահագնի քաջութիւնք, և անկէ զուրս այլ պէպէս աւանդութիւնք: Այսպէս է և Անանիա Շիրակացոյ յիշածն յԷ դարու. « Ի խիստ ձմերանի՝ » վահագն նախնի Հայոց՝ զողացաւ զյարգ » Բարշամայ Ասորեստանեայց նախնոյն. զոր և » մեր սոխորեցաք բնախօսութեամբ՝ Յարգ » զողի հետ անուանել: » Այս յիշատակս շատ աւելի հին ցուցընէ զվահագն քան զՏիգրան, և իբր Արամայ ժամանակակից: Հնդիկք այլ նման իմն աւանդութիւն ունին. Պոնիս կամ Վալա անուամբ Ասորի մի կու գողանայ շատուածք նախիրը և կու փակէ քարայրի մի մէջ. ինչոտ շատուած՝ օգնութեամբ Մորկայ (Մարուտ) և առաջնորդութեամբ Մարամայ եղնիկին՝ կու բանայ քարայրը և կ'արձըրկէ աւաստները:

Վահագնի՝ հնդկային առասպելաց հետ ուրիշ նմանութիւնները յիշեցինք արեգական պաշտաման մէջ, և նոյն իսկ անունն այլ վահու-Ալին. մեր հին գրուածի մի մէջ վահահագն կուռի մեր զիցազն և մէկ հին վարդապետի վկայութիւնն, թէ « Ոմանք զա » ըրգակն պաշտեցին և վահագն կոչեցին ». և այսոր յարմար վիպասանից երգածն, Երկնէր երկին և կարմրիկ եղեգնիկն. որոյ նման զարձեւ ուրիշ ազգաց, ինչուան Չինաց, աւանդութեանց մէջ այլ գտուին՝ եղեգէ, լատտէ կամ ուրիշ բոյսէ մի բնծայուած շատուաներ: Շատ զարեւր վերջը վարդապետայ

Ն. Օրինակի մի մէջ փոխանակ Բարշամայ « Բարդամայ » Ասորոց նախնոյն », գրուած է:

ատեն Հնդկաց քուրմերու զալն ի Հայս նոր շատուածներով, փաստ մ'այլ կ'աւելցընեն վահագնի հնդկային յարընութեան. որուն մեհեանքն այլ նոյն հնդկի անուամբ վահե- վահեան կոչուէին, պաշտօնեայքն՝ Վահեռու- նիք (Βαβηιος ըստ յոյն Ագաթանդեոսի) :

Մեր աշխարհակալ Արշակունիք՝ որ աւելի շատուածակալք կոչուելի են, ի Յունաստանէ բերած կոոց և Հայոց աւանդութիւններն այ- լայլելու համար, վահագնին այլ նոյնպէս ը- նել տուին. այսոր սեփականեցաւ Հերակլի անդրին, հոչակաւոր Սիլիւսայն և Կրետացի Դիւլինոսի՝ պղնձաձող սպէգօծ ձեռագործն, զոր վահեռուիք իրենց վիշապաբազ վահագն համարելով կամ յարմարելով՝ կանգնեցին ի Յաշտիշատ Տարօնոյ, Անահայ և Ասաղկան մեհեանից քով՝ այսոր այլ նուիրելով երրորդ մի, (վահեռուիք կամ վահեռուիք), « մեհեան մեծագանձ, լի սուկով և արծա- » թով, և բազում՝ նուէրք մեծամեծ թա- » զարաց ձոնեալ անդ, ութերորդ պաշտօն՝ « հոչակեալ » : Շատ զժարութեամբ կործա- նեց Լուսաւորիչն այս կուռքս, վասն զի Հնդկաց սերունդ քուրմք՝ յամառեալ պաշա- պանէին : Բայց եթէ Հնդկիք իրենց Ալինին համարելով պատուէին զաս, և թէ վիբք նախ սկսան պաշտել ընական մեծութեամբ մարդոյ՝ արձան մի կանգնելով, ըստ Խորե- նացոյ, և թէ հին Պարսք այլ ըստ դիւնա- կանի միոյ՝ վերերրակեալ կոչելով ի զան- դիկ գիրս, սակայն Հայք իրենց սիրեալագոյն և մեծագոյն զից մէկն ճանչնային զաս. ինչ- պէս յայտն է հրովարտակն Տրդատոյ, յետ Արամազդայ և Անահայ մաղթելով ազգին, « քաջութիւն հասցէ ձեզ ի քաջն վահագնն » . զոր հարկ է և Արիսի փոխան համարել, վասն զի ուրիշ պատերազմի շատուած յի յիշուիր Հայոց :

1. Պլինիոս կու յիշէ այս ճարտարաց ձեռա- գործը, բայց մարմարինն քարէ կ'ըսէ և Յունաց Արկոն քաղաքի մէջ կանգնած. ուրեմն տարբեր է Խորենացոյ և Ագաթանդեոսի յիշածէն :

2. Եթէ այսպէս ութերորդ կարգալու է և ոչ եօթներորդ, ապէ անալ յիշուած մեծ մեհեան- քըն են համարուելու եօթն :

Տարօնէ զուրս՝ վահագնի մեհեան մ'այլ յիշուի յԱհեական գիւղ Տոսպայ, որ նոյն վահեռուիքեան անունը լսեցընէ, ինչպէս և որոշակի կ'ըսէ Թովմ. Արծրունի. « քանզի » էր և տեղին այն յառաջագոյն տեղի մեհե- » նից վահեռուիքեանի » : Այս պատմիչս յիշէ և ի փոքր Աղբակ գաւառի մեհեան մի Հե- րակլի, Բ Արսաշիսէ կանգնած, և համա- բելի է վահագն : Հերակլի դէք յիշուին և ի Սալահունիս Գերջան գաւառի, Տրդատայ օրերում, Ասկիւպեան զից հետ, որոց մեծա- հանդէս տօնք կատարուէին այն տեղ, բայց այստեք թեքեաւ բուն յունական դէք էին :

Վահագնի բնիկ պաշտօնեայ քուրմք՝ իւր ցեղէն կամ ի Հնդկաց սերուած կարծուին, վահունիք, վահեռունիք կամ վահունիք կո- չուած, որոց յանձնեց վաղարշակ այդ պաշ- տօնը, և իրենց ցեղն այլ նախարարաց կար- գին բարձրացուց, թէպէտ առ ժամանակ մի զրկուեցան պատուէն՝ հրամանաւ Տիգրանայ, որուն չհարցընելով՝ Հերակլի անդրին կանգ- ներ էին ի Յաշտիշատ, և իրենց գեղն այլ զրուեց նա յարբունիս : Իսկ Ս. Գրիգոր բա- զինները վերցընելով՝ առաջին եկեղեցոյ տեղ ըրաւ, և քրմաց տեղ վերակացու դրաւ զՍ. Դանիէլ ծերունին, իբրեւ իր փոխանորդ, և փոխան վահագնի տօնից՝ սահմանեց Յովհ. Կարապետի և Ս. Ամանադիմեայ եպիսկո- պոսի տօն՝ Սահմի ամսոյ եօթին, որոց նըշ- խարաց մասն դրաւ ի հիմն եկեղեցոյն :

Յետ ջնշուելու վահագնի պաշտամանն՝ դեռ իր վրայ հին իլիպսանից հիւսած երգերն կու լուռէին ինչուան մեր թարգմանչաց օրերում. և սորա համարձակ վահագն գրէին զՎերակլ՝ նա և Ս. Գրոց թարգմանութեան մէջ : Ան- մոռաց մնաց և ծրի կաթին համաստեղու- թեան՝ Յարգողի հետ կօչելն, որ կ'ըսուի առ մեզ և Հեծանոց, իբր թէ հեծանոց փայտին շալկած էր զյարգն. այս առասպելս օտար ազգաց և ինչուան թուրքաց մէջ մնած ըլլալն յայտն է. իրենք այլ նոյնպէս կու- չեն զհամաստեղութիւնն այն, Սահաւն նօ- յոս : — Ժամանակի վերաբերեալ հաւատոց վրայ խօսելով՝ յիշեցինք որ ամսոց 27դ օրն նուիրեալ էր կամ այն օրուան պահապանն էր վահագն :

վահագնի պատճառաւ՝ թէ այս տեղ թէ յառաջ՝ շատ անգամ յիշելով Հնդկային դեցաբանութեան այլ հայկականին հետ խառնուրդը, հարկ է որ յիշեմք հիմայ և ինչ որ իբր ստոյգ աւանդեն պատմութեմ յեր այն կողմէ եկած զոյգ մի դից կամ դիցազնացելոց համար, և հասարակօրէն Գեւեկտր և Գիսանէ կոչուելոց, թէ և անունին այլպալած է, և չեն յիշուած ոչ ի Խորենացոյ և ոչ յԱզաթանպետէ, այլ ի յատուկ պատմիչ Տարօնոյ (Չենսիբայ), ուր որ պաշտուէին այս եկամուտ դիք. և ըստ պատմութեան կամ զրուցաց՝ եղբարք էին և աշնուականք ի Հնդկիս, որոց Գինարսէ թագաւորը՝ սպաննել կ'ուզէին. այլ երբ իրենց խորհուրդն յայտնուեցաւ՝ փախան եկան ի Հայս, մինչ վաղարշակ նոր հաստատէր Հայ-Արշակունեաց թագաւորութիւնը: Սա ընդունեցաւ զանոնք և իրենց երկիրներ տուաւ Ապահունեաց և Տարօնոյ գաւառաց մէջ. ուր բաց ուրիշներէ՝ շինեցին Օձ կամ վիշապ քաղաքը կամ աւանը, և օձակերպ կուռք մի կանգնեցին, ուրիշ կուռքեր այլ յԱտիշատ, և իրենց հայրենի ծիսով պաշտէին: Քանի մի տարի վերջ՝ վաղարշակ՝ կամ Հնդկաց թագաւորին դրամամբ կամ ուրիշ բանով յանցատր զըսնելով զանոնք՝ սպաննեց, բայց երկիրնին թողոյց անոնց որբոց: Ասոնք՝ Եղառս և Մեղտի՝ որդիք Գիսանեայ, և Հոռեան կամ Հոռեմ որդի Գեմետրի՝ մէկ մէկ գեղ շինեցին և կոչեցին իրենց անուամբ, ինչպէս ինչուան հիմայ այլ ստոյգ այսպէս կոչուին, (բայց ինչ պատճառաւ կոչուին չէ ստոյգ): Իսկ ի յիշատակ իրենց հօր՝ Ատիշատի քով Քարբէ լեան վրայ անոնց քարեղէն արձաններ կանգնեցին, Տարօնոյ և Պալունեաց գաւառաց միջոցում. դարձեալ երկու պղնձէ անդրիներ այլ, Գիսանի՝ 30 կանգուն բարձր, Գեմետրին 15 կանգուն, և անոնց մեծեանները պահողաց և պանդրխտից համար 12 գեղ նախիրեցին. իրենց սրդիք և ցեղն այլ քուրմ և պաշտօնեայ դրին իրենց աստուածացուցեալ նախնեաց, որք և յորբոց յորդի յաղորդարար պահէին և պատուէին այլ տեղուանքը: Այս է պատմական աւանդութիւնն. պատմական կ'ըսեմ՝ զրաւոր և յանուն պատ-

մրչի ըլլալով, բայց շատ անհաւանական և անյարմար մասամբք, եթէ և ստոյգ հիմ մի կայ: Յետ 400 և աւելի տարիներու՝ ուրիշ Հայոց կոոց հետ զատնք այլ կու զայ կործանելու: Ս. Գրիգոր, բայց շատ դժարաւ թեամբ և պատերազմելով, Տրդատաց զօրաց օգնութեամբ, ինչպէս մանրամասն պատմութի յանուն Չհնորայ ժամանակակից Ասորոյ և անոնց փոխան կանգնի Մշոյ պարծանք Ս. Կարապետն. բայց յամառ կռապաշտ և հայրենապաշտ քրմորդիքն զժարաւ ընդունեցան զքրիստոնէութիւն, և երկար առնն՝ զոնէ իրենց նախնեաց յիշատակ մի պահել շանային, ինչպէս Գիսանէի սեբունդքն՝ անոր շատ զիսաւոր (մազոտ) ըլլալուն համար՝ չէին ուզեր իրենց մազերն այլ կորել, և երբ ստիպուեցան կորելու, մէկ երկու փունջ թողուին երկայն. գոյներնին այլ սեկակա՝ դեռ պրենք կ'որոշեր ի բնիկ Հայոց:

Այս աւանդութիւնները կառուցնելով կու յայտնուին հնդկային հետք. Գիսանեայ անուն և իմաստն այլ զուզուի. վասն զի հնդկերէն այլ գէս զնոյն հայերէնը նշանակէ. անոնց Քրիշնա շատուածն այլ Գեառաս անուանի, որ է ըսել Գիսաւետ, զիսաւոր: Գեսիւն անուամբ չար Քաջ մ'այլ կար ի Հնդկիս, որ երբեմն մարդակերպ երբեմն ձիամարդ կամ ձիացուլ երեւնալով՝ շատ վնաս կ'ընէր, մինչև սպաննեց զնա շատուածն վիշնու: Հաւածօրէն այս շատուածք էին պատուածքն ի Տարօն, քան թէ առ վաղարշակ փախստեայ եկողքն. թերեւ և վիշնու անունն այլ խառնուած է ի պաշտեցեալ վիշապ տեղւոյն: Իսկ Գեմետրի անունն՝ զոր հիմայ Գրսևտր գեղն պահէ, հաւածօրէն լսեցնէ Հնդկաց երրորդութեան Տրիսնատրի շատուածքը, (որք են Բրահմա, Վիշնու և Սեւա): Գեմետրի որդւոյն անունն այլ որ Հոռեմ զըսած կայ, յիշեցնէ զՀոռամա կամ Ռամա շատուածն, որ նոյն ինքն վիշնու է եօթն անգամ մարմնացեալ:

Ասոնց հետ հարկ կ'ըլլայ անգամ մ'այլ յիշել քանի մ'անգամ արդէն յիշուած և վահագնի լծորդ հնդկային Ակնին հոյ շատուածն և արեւակերպ իկպասանեալն ի Հայոց (Հա. ԾԲ. երես 195): Մեր ոչ շատ ծանօթ

այլ բաւական հին Միսէոն անուն վարդապետ մի՝ քրմաց և իրենց նիգակակցաց պատե-  
 րազմը յիշելով Տրդատայ զօրաց հետ, այս-  
 պիտի մթննկէ բան մի գրուցէ. « Ուստի և  
 » Գեղեցիկն Ագեհա՝ կրկին, ասեն, զերիս  
 » աւարս (ի) մարտ պատերազմին կացեալ » .  
 կարծեմ ըսել է, թէ քուրմերն կ'ըսէին որ  
 իրենց զեղեցիկ Ագեհան երեք կամ վեց օր  
 պատերազմեցաւ Հայոց զօրաց հետ. և թէ  
 սա էր պաշտուածն ի Տարոն՝ քան Յունաց  
 համանուն Ադոնոս 'Αγνος կոչուած Արտեմիսն  
 ողջախոհն, կամ սրբասերն (ՅԿՄԻ) իօիս :  
 Միթէ և այն աղբերաբառով տեղին՝ որոյ  
 համար կ'ըսէ պատմին (Չենոր), թէ « ին-  
 քակնեան կոչեն տեղոյն Հնդկէք և Պար-  
 սիկէք », Ալին անունը չի՞ բովանդակեր՝ այս  
 անուամբ : — Հնդկաց զիցաբանութիւնն և  
 լեզուն մաղբելով՝ գուցէ նոր լոյս ծագէ այս  
 Տարոնոյ կողմերում պաշտուած կոց և Գի-  
 սանէի ու Դեմետրի վրայ :

ԳԻՔ ՎԱՆԱՏՐԻ ԵՒ ԱՄՈՆՈՐՈՅ. — Այս-  
 բոսոյ ընդարձակ և զեղեցիկ Բագրեւանդ  
 գաւառի և դաշտի մէջ՝ էր Հայոց զվառուր  
 զիցապաշտութեան կերթոն մի, ըստ պան-  
 շանին Բագաւան կոչուած, իբրեւ Դիոսպոլիս  
 (աստուածաբաղար) յունական. ուր՝ եթէ և  
 մեծադոյն շաստուածոց բազինք կային՝ բայց  
 յատուկն և յածախեալ էր Վանատրի զից-  
 որոյ անունն միշտ այսպէս սեռական նոյնով  
 հանդիպի ի գիրս, ուստի կրրնար կարծուիլ՝  
 թէ Տրի (Տիր զից) և Վանի բարդութիւն մի  
 ըլլայ. բայց հասարակօրէն համարուած է Վա-  
 նատոռ, իբրեւ հիւրընկալ հիւրասէր, օտա-  
 բաց և պանդխտոց ընդունող. միով բանիւ  
 ըսա բանի Ս. Գրոց, (Բ Մակ. 2. 2.) նը-  
 ման Յունաց « Հիւրասէր Որմզդական զիցն  
 Վանասարի », այսինքն Արամազդայ (Ξένιος  
 ըստ Յունաց, Hospitalis Լատինաց). և զի  
 իր ասոն կատարուէր ի տարեգլխի Հայոց ի  
 Նատատարի, և երկրին ամեն կողմէն մեծ  
 բազմութիւն մարդկան հօն կ'երթար, հարկ  
 էր շատ իջեվաններ գանել, և ըստ այսմ  
 յարմարի շաստուածոյն այդ անունն. և թուի  
 թէ ուրիշ շատ կողմեր դժուար և լեռնոտ  
 ճամբաներու վրայ շինուած իջեվանքն այլ

նուիրեալ ըլլան այս զից, որք և ի յետին  
 ժամանակ փոստկա կամ փոստիկա կոչուին,  
 կարաւանատուն և կրպակ նշանակելով, այլ  
 ծագումն բառին անծանօթ է ինձ. եթէ չէ  
 պարսկերէն Պիարթուտ որ միանպամայն կա-  
 տուն և պանդոկ նշանակէ, քէնք և ոչ միայն  
 ի կոպաշտութեան ժամանակ այլ աւելի ի  
 քրիստոնէութեան՝ հաստատուած են այսպիսի  
 շէնք, և հարիւրաւորք ի Մեծէն Ներսիսէ,  
 ըստ պատմաց իր վարուցն : — Նոյն և մի՝  
 թէ տարբէր էին Ամանորայ զիցն այլ, հա-  
 ւաստի չէ. և ոչ անոնց կամ անոր կերպա-  
 րանքն և նշանակք. Ազաթանգելոս՝ քանի  
 մի առղերով յիշէ, բայց ոչ պարզաբան (ըսա  
 հայ թարգմանութեան), « ի ժամանակի Դիցն  
 » Ամանորայ՝ ամենաբեր նորոց պտղոց սունից  
 » Հիւրընկալ զիցն Վանատրի, զոր յառաջա-  
 » ղոյն իսկ ի նմին տեղում պաշտէին՝ յու-  
 » բախութեան Նաւասարդ առտար », որ է  
 առաջին օր տարւոյ, կաղանդն Հայոց. և  
 յայտ է որ այս տարին հաստատուն արեգա-  
 կան շրջանաւ էր, որպէս զի միշտ զարնան  
 կամ մանաւանդ ամառուան եղանակին հան-  
 դիպի, երբ պտուղք այլ հասունացեալ կ'ըլ-  
 լան, և ըստ այսմ կու վայլէր որ այդ Ա-  
 մանորսբեր շաստուածն՝ Լատինաց Պոմոնա  
 (Pomona) զիցուհոյն փոխանն ըլլայ, կամ  
 իր փեսային Վերտամնոսի՝ (Vertumnus),  
 որ էր պարտիզաց և պահիզաց պահպան, և  
 կերպարանէր զեղեցիկ՝ ծաղկապսակ երիտա-  
 սարդ մի, պտուղներ և եղջիւր առատութեան  
 ի ձեռին, նոյնպէս և Պոմնա՝ զեղեցիկ յա-  
 վերժահարոն՝ սրթով և օղկուզներով պսակեալ  
 և նոյն առատութեան կամ ամենաբեր եղ-  
 ջիւրն ի ձեռին : Եթէ չեմք կրրնար հաստա-  
 տել՝ գոնէ կրնամք վայելուչ ըսել որ Վանա-  
 տուրն և Ամանորայ զից այլ հարնն ու փե-  
 սայ ըլլան Հայոց այգեաց և պարտիզաց, և  
 գուցէ միւս յունական կոց հետ՝ ասոնց այլ  
 պատկերքն գերուած բերուած այս տեղ : Յի-  
 շտարուաց առնուած էին, իսկ Ետրուաք  
 անտարակապ յարեւելեաց, և որպիսի՞ ա-  
 թեւելեաց : — Հասարակ է գրեթէ ամե-  
 նայն ազգաց և առկաց մինչեւ հիմայ՝ ըստ  
 եղանակի իրենց երկրին՝ այսպիսի ծաղկանց

և պտղոց տօն և ուրախութիւն կատարել. և ի Հայս այլ տեղ տեղ տարւոյն վերջի օրը Մշակութեան կոչեն, որ ըստ այժմու գործածուած տուժարի՝ անյարմար է, և ոչ միայն յարմար Հայոց Նաւասարդին, այլ և հաստատող այն աւանդութեան:

Այս տարեգլխոյ և առաջին ամսոյ անունն, ինչպէս շատ անգամ բացատրուած է, ոմանք կարծէին թէ ֆաղդէից տօմարը նորոգող Նաւասարդի մ'անուամբ ըլլայ. (Թողունք Նաւասարդին տրուած մեկնութիւնը). բայց լեզուա-

ղէտք ստուգեն կամ ըստ զանդիկ Պարսից Նաւա-Սէրհաստա, որ ճիշդ Ամանոր, նոր ամ' ըսել է, և կամ մանաւանդ ըստ Հընդկայ Նաւա-Սարաստ, Նոր ջրոց տօն: Գիտեն՝ ամենքն ինչ որ վարդալուսի տօնին արտաքին հանդէպ կատարուին ջրոց սրբկմամբ՝ առ մեզ, նոյնպէս և ի Պարսս իրենց նոր տարւոյն. յայտ է եւս զի վարդալուսն՝ այժմ տօն Աւակերպութեան ֆրիստտի, Նաւասարդ ամսոյ առջի օրերուն հանդիպի: (Շարայարեյի).

## Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ր Ա Կ Ա Ն

### ՍՐԲԱԽՍՍՈՒԹԻՒՆ (HAGIOGRAPHIE) ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵԿԵՂԵՑԵԱՑ

ԵՒ ԱՌԱՆՁԻՆ Է ԱՑ Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ր Ա Կ Ա Ն Մ Ե Զ

#### Ա

**Ք**րիստոսական կրօնից և երկնահրաւեր վարդապետութեան զէմ յարուցուած հալածանաց բռնութիւն՝ Հռովմայ կայսերաց հրամանաւ, իրենց տէրութեան ընդարձակածաւալ սահմանաց, և կայսերանիստ ոտանին մէջ ըլլալով, բնական հետեանքով այն մեծ քաղաքը, քրիստոնեայ աշխարհին համար կեդրոն մը պիտի ըլլար, ուր նախ պիտի հաւաքուէին, և ապա փնտրուէին և օւսումնասիրուէին՝ սրբոց մարտիրոսաց, յարեւելս և յարեւմուտս, ուր կ'իշխէին և կը հրամայէին Հռովմայեցիք, վարուց և վկայական հանդիսից նախնական հետք և ստուգապատմ՝ վաւերականք: Լուրջ և ծանրակշիռ վրկայութիւնք նախնի քահանայապետական տարեգրութեանց կ'աւանդեն, թէ սուրբն Եղեմէս՝ կամ անմիջական և կամ երկրորդ յաջորդ առաքելապետին, պատուիրք ու սահմաներ էր Հռովմ քաղաքին չորքատասն բաժանմանց կամ թաղից մէջ՝ եօթն յօտարք,

որոնց զործն և պաշտօնն պիտի ըլլար՝ իւր նամբով և հաւատարիմ զգուշութեամբ հաւաքել՝ իւրաքանչիւր թաղի հասարակութեան մարտիրոսաց վկայութիւնն կամ զործերը (ՁԵՆՅ): Ականատես վկայից բերնով աւանդուած, նօսարաց ձեռքով, և տիրոնեան սղագրութեան զիւրին ճշգրտութեամբ զրի առնուած, ամին եկեղեցեաց և գետնազամբանաց մէջ ժողովուած հաւատացեալներէ վերաքննութեամբ արձանագրուած այս զործերը, արիականք և երկնահրաւէր, կը մատուցուէին առ սրբազան քահանայապետս. « որոց եւանդուն հաւատոց պրզասիր են, կ'ըսէ Քահանայապետական մատենակն (Liber Pontificalis) այս նուիրական գրոց բազմութիւնք »:

Որչափ ալ ուզէ մէկը տարակուսական ենթադրել զստուգութիւն այս վկայութեան, կամ սարբեր իմաստ օտալ անոր, սակայն նոյն ժամանակէն քիչ մ'ալ վեր ելնելով, զիւրին է գտնել նաև մինչ ի պրակս